CHAMBER OF ADVOCATES OF RA CHAMBRE DES AVOCATS DE LA RA
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ Արտոնագիր 707

ք. Երևան, Հս/Ամտ Վ-3, տ. 106, harutyunbaghdasaryan.adv@gmail.com
14.02.2026թ. 004/Դ-26 հեռ. 093-144-282

ՀՀ ազգային անվտանգության ծառայության
տնօրեն **Անդրանիկ Սիմոնյանին**
Հասցե՝ Երևան, Նալբանդյան փողոց 104, Էլ.հասցե՝ ta@sns.am

Պատճենը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության
գլխավոր քարտուղար **Դավիթ Կարապետյանին**
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Էլ.փոստ՝ info@mfa.am
Պատճենը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի
գլխավոր քարտուղար **Էդգար Գևորգյանին**
Հասցե՝ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7 Էլ.փոստ՝ secretariat@petekamutner.am

Հարգելի պարոն Սիմոնյան

Ստորև ներկայացվող տեղեկատվության համաձայն՝ Հայաստան են մուտք գործել թշնամի պետության քաղաքացիներ:

https://www.youtube.com/shorts/K9PU1CxEAiA

«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն.

Երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և այլ հաղորդակցությունը պետական սահմանով իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած անցման կետերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

Պետական սահմանի անցման կետերում ստեղծվում են սահմանապահ զորքերի հսկիչ-անցագրային կետեր:

Պետական սահմանի անցման կետերում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է մաքսային հսկողության գոտի, որտեղ հսկողություն են իրականացնում բացառապես մաքսային մարմինները:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն դիմում եմ Ձեզ և ՀՀ Կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ սահմանված կարգով խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություն հետևյալի մասին.

- Ո՞ր իրավական հիմքով և ե՞րբ է Կիրանցում բացվել ՀՀ սահմանը:
- ՀՀ մուտքի ինչպիսի՞ վիզա է տրամադրվել թշնամի պետության քաղաքացիներին:
- Պետական սահմանի ցամաքային անցման կետում իրականացվե՞լ է արդյոք մաքսային հսկողություն:

Տեղեկատվությունը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Պատրաստ եմ վճարել տեղեկատվության հետ կապված ծախսերը:

Հարգանքով՝

փաստաբան  Հարություն Բաղդասարյան